

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԿԻԼԻԿԻՈՑ

Եղաբերական

Հ. Բ. Ը ԽՈՒԹԵԱՆ 1933 ՏԱՐԻՈՅ ՄՇԱԿՈՅՑՔԻ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ

Սիրելի Ժողովուրդ Հայոց.

Հ. Բ. Բ. Միութիւնը անցեալ տարիէն սկսեալ Որբերու Կիրակին վոյսեց ՄՃԱԿՈՅԹԻ ՕՐՈՒՄՆ, եւ այդ առթիւ հանգանութիւն մը բացաւ ի նպաստ իր կողմէն կառավարուած եւ օժանդակուած Հայ դպրոցներու:

Բարեգործականը այս տարի եւս, Դեկտեմբերի առաջին Կիրակիչն սկսեալ պիտի ընդունի Ձեր նուէրներն ու նպաստները միեւնոյն նպատակով, եւ մենք զեր-մապէս կը յորդորենք Կաթողիկոսութեանս սահմաններուն մէջ գտնուող բոլոր հայերը որպէս զի իրենց սրտաբուխ եւ գուարթառառ նուէրները տան Բարեգործականի Տե-ղական Մասնաժողովներուն կամ անոնց կողմէ նշանակուած հանգանակիչ մարմիննե-րու եւ անձերու, նոյն ինքն ազգին գտակներուն կրթութեան համար:

Մեր ազգին մէջ Հ. Բ. Բ. Միութիւնը այն միակ Համազային կազմակերպութիւնն ու ընկերութիւնն է որ առանց կոյս ու կողմ խտրելու, կ'արդարացնէ իր անունը՝ վերադարձնելով Զեր նուէրներն ու նպաստները բազմապատիկ եւ թաթառն չափով:

Առիթէն օգտուելով կոչ կ'ուղղենք մեր Սիրելի ժողովուրդի այն բոլոր զաւակներուն, որ դրամ՝ կը վաստկին, իրենց վաստակին կանոնաւոր բաժին հանեն Բարեգործականին՝ անդամագրուելով անոր եւ կանոնաւորապէս վճարելով իրենց անդամական տուրքը ամէն տարի:

Պարտք կը դնենք մեր թեմակալ Ս. Եպիսկոպոսներու, Քահանաներու եւ Առաջնորդարաններու շուրջ կազմուած բոլոր պաշտօնական մարմիններու վրայ, որպէս զի օգնեն Բարեգործականի ազգօգուտ ծեռնարկներուն, յորպորեն ժողովուրդը որ անդամ ըլլան Բարեգործականին, եւ իրենց պարտականութիւնները կատարելով օրինակ հանդիսանան ուրիշներու:

Բայտ Ազգ. Սահմանադրութեան, պաշտօնական մարմիններու պարտականութիւնն է քաջալերել ազգօգուտ ծեռնարկները և նպաստել անոնց յաջողութեան:

Բարեգործականը Հայ ժողովուրդին Միութիւնը խորհրդանշող միակ կազմակերպութիւնն է, իրագործենք զայն մտնելով այդ Միութեան մէջ, զօրացնենք զայն որակով եւ քանակով, որպէս զի ասով զօրանան մեր պարոցները եւ հոգացուին միբացալին ուրիշ պէտքերը:

ՄԾԱԿՈՅԹԻ ՕՐԸ մեր սիրելի ժողովուրդին համար թող ըլլայ իր աէրը, իր համոզումն ու հաւատքը գործնականապէս արտայայտելու օր մը՝ հանդէպ հարեցործականի:

Կը հայցենք աստուածային օրինութիւն բարի գործերու եւ Բարեգործականի վրայ:

Կը մաղթենք յաջողութիւն անոր բոլոր գործիչներուն համար, եւ մեր հայրական սէրն ու ողջոյնները նուիրելով մեր սիրելի համայն ժողովրդեան,

Մնամք աղօթարար

1933 *Uniflex* 21

ԱՅՀԱՐ Բ. ԿԹՎՈ. ԿԻՒԿԻԱՑ

Sweat

ԱԹ-ԱԹ-ԱԿԻՑ ՆՈՐԻՆ ԲԱՐԳԻՆ ԿԹԴԱ

Wm. H. & R. M. Philbrick
Franklin May Jr.

1214-2010

26-442